

Այս երկու հակապատկեր լուսանկարները կոնկրետ հասցե ունենալով հանդերձ ընդհանրացնում են այն ճգնաժամային իրավիճակը, որն առաջացրել է Ադրբեջանի կողմից խորհրդային Հայաստանի դժնի շրջափակումը: Հանրապետության ժողովրդական տնտեսության արտադրական ոլորտներում նույն վիճակն է, արտադրանքը՝ պատրաստ է առաքման, իսկ երկաթուղին փակուղում է՝ շրջափակված:

ՆԿԱՐՆԵՐՈՒՄ.—

◆ Ահա ձեր արտադրանքը, պատվիրատուներ:

◆ Դատարկ ուղեցծեր: Իսկ ո՞ւմ է ձեռնտու դա:



ԱՆՁՆՎԵՐ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ... ԿՈՐՈՒՍՏՆԵՐ

Ադրբեջանի կողմից երկաթգծի շրջափակման հետևանքով մոտ 7 մլն ռուբլու հումք ու նյութեր չի ստացել «Լույս» արտադրական միավորումը: Չնայած դրան, բազմահազարանոց այս կոլեկտիվը առայժմ կարողանում է աշխատել, արտադրանք թողարկել: Առայժմ կարողանում է: Երբ հումքի ու նյութերի պաշարները կսպառվեն, կոլեկտիվը ստիպված կլինի դադարեցնել աշխատանքը:

— Թերևս, ոմանց կհետաքրքրի, թե մատակարարման երակի կտրման պայմաններում ինչպես ենք կարողացել գործը կազմակերպել, այնքան դիմանալ,— ասում է միավորման կուսկոմիտեի քարտուղարի տեղակալ Գ. Սարգսյանը:— Նախ՝ շրջանառության մեջ ենք դրել մեր բոլոր ռեզերվները, և ապա՝ միջոցներ ենք ձեռնարկել ու որոշ նյութեր ստացել օդային տրանսպորտով, մի բան, որ մեզ վրա բազմակի թանկ է նստել: Այս և շրջափակման հետևանքով մյուս կորուստները, իրար գումարվելով, մեր եկամուտները նվազեցրել են 8,5 մլն ռուբլով:

Այժմ միավորման պահեստներում կուտակված է շուրջ 6 մլն ռուբլու պատրաստի արտադրանք: Դա՝ այն դեպքում, երբ կոլեկտիվի հասցեով երկրի տարբեր ծայրերից մեկը մյուսի հետևից ստացվում են հեռագրեր՝ ուղարկե՛ք մեր հասանելիքը: Բայց ինչպե՞ս ուղարկել, երբ երկաթգիծը փակ է, երբ Ադրբեջանի կողմից ոչ միայն բաց չեն թողնվում դեպի Հայաստան եկող գնացքները, այլև այստեղից գնացողների առջև էլ կարմիր լույս է վառված: Անտրամաբանական է, սակայն լամպագործներն ստիպված են լինելու իրենց օգուտներից 0,7 մլն ռուբլի տուգանք վճարել՝ պայմանագրային պարտավորությունները չկատարելու համար:

Իսկ ո՞վ է հատուցելու այն վնասները, որ միավորմանը պատճառվել են շրջափակման հետևանքով: Ըստ որում, շրջափակումը ուղղակի հարվածել է կոլեկտիվի յուրաքանչյուր անդամի գրպանին, ոչ նորմալ պայմանների աշխատանքը, արտադրանքի չիրացումը աշխատավարձի ֆոնդը նվազեցրել են 2 մլն ռուբլով: Եվ օրինաչափ է մարդկանց մտահոգությունն ու զայրույթը՝ այս անարխիան, երկաթուղային այս «ծովահենությունը» ինչքա՞ն է շարունակվելու: